02.09.2022թ.

Հաստատում եմ՝
Դպրոցի տնօրեն՝ Հ. Հովհաննիսյան
Դպրոցի փոխտնօրեն՝ Ա. Առաքելյան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Զովաբերի միջնակարգ դպրոց, 9-րդ դասարան
ուսումնական հաստատության անվանումը, դասարան

Գ. Ստեփանյան
դասղեկի ազգանունը, անունը

2022-2023 ուսումնական տարի

ԿՐԹԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ***ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ*** /դասարանի ընդհանուր բնութագիրը/ Դասարանը բաղկացած է տասնյոթ հոգուց՝ յոթ տղա, տաս աղջիկ: Աշակերտներից չորսը ունեն գերազանց առաջադիմություն: Դասարանում բոլոր աշակերտները համախմբված են: Անհատական աշխատանք է կատարվել ցածր առաջադիմություն ցուցաբերած աշակերտների հետ: Աշակերտները պատրաստակամ են, նախաձեռնող, ցուցաբերում են ակտիվություն: Դասարանում չկան դժվար դաստիարակվող աշակերտներ: Ակտիվ մասնակցել են համադպրոցական բոլոր միջոցառումներին:

2. **Ուսումնա-դաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում**

Ուսումնա-դաստիարակչական նպատակով պետք է հաճախակի հետևել դասարանի վարքին և ուսման առաջադիմությանը: Հրավիրել ծնողական ժողովներ, որոնք կնպաստեն աշակերտների ակտիվության բարձրացմանը: Աշակերտների մոտ ձևավորել բազմաբնույթ կարողություններ /կարգապահություն, մաքրություն, անձնական հիգիենայի, համագործակցություն, փոխօգնություն/:

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 *Հոգևոր դաստիարակություն*. Այս նպատակով կազմակերպել էքսկուրսիա դեպի մոտակա հոգևոր մշակութային կենտրոններ: Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ: Նույն նպատակով կատարել պատմական ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը:

3.2 *Գեղագիտական դաստիարակություն* Ֆիլմերի միջոցով ցուցադրել և բացատրել թե գեղեցիկը ինչ դեր ունի ներկայիս կյանքում: Բացի այդ լսել աշակերտների կարծիքը այդ նյութի վերաբերյալ: Կյանքից բերել օրինակներ և փևավորել գեղագիտական ճաշակ:

3.3 *Ռազմահայրենասիրական դաստիարակություն* Հայրենասիրության կրթության վերաբերյալ կազմակերպել քննարկումներ: Նշել մի շարք ֆիդայիների անուններ և թվարկել այն բնավորության գծերը, որտեղ ակներև է հայրենասիրությունը և ռազմարվեստ ձևերը:

3.4 *Ֆիզիկական դաստիարակություն* Դասապրոցեսին պետք է ցուցաբերել ակտիվություն: Բացատրել և պահանջել, որ աշակերտները հետևեն իրենց ֆիզպատրաստությանը: Կոփեն իրենց մարմինները ֆիզվարժությունների և հնարների միջոցով:

3.5 *Աշխատանքային դաստիարակություն* Աշակերտների մոտ ձևավորել սեր դեպի աշխատանքը և աշխատավոր մարդը: Տալ աշակերներին այն գաղափարը, որ կարողանա գոյատևել ներկայիս դժվար պայմաններում:

3.6 *Բնապահպանական դաստիարակություն* Պետք է կազմակերպել էքսկուրսիաներ դեպի բնության գիրկը և այդ ընթացքում թվարկել բնապահպանական մի քանի խնդիրներ, որոնք առկա են իրենց շրջապատում և այդ խնդիրը գլոբալ է:

4. Դպրոց-ընտանքի կապը

Երեխաները պետք է հասկանան, որ ընտանիքը հանդիսանում է պետության կորիզը: Միևնույն ժամանակ գիտակցեն, որ պետք է սերտ կապի մեջ պահեն դպրոց ընտանիք կապը, որպեսզի աշակերտները ավելի լավ սովորեն:

ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթներ	Ուսմնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակություն	Կատարման ժամկետը	Կատարողներ
1.	Սեպտեմբերի 1՝ գիտելիքի ու դպրության օր: Նախորդ ուստարվա արդյունքների վերլուծություն, նոր ուստարվա անելիքների ծրագրում	սեպտեմբեր	աշակերտ դասղեկ
2.	Անկախության անգնահատելի դերն ինձ համար	սեպտեմբեր	աշակերտ դասղեկ
3.	Մեր խորհրդանիշները՝ դրոշ, զինանշան, հիմն	սեպտեմբեր	աշակերտ դասղեկ
4.	Արցախյան հերոսամարտիկները: Եռաբլուր պանթեոնը	սեպտեմբեր	աշակերտ դասղեկ
5.	Նշել ,,Ուսուցչի տոնը"	հոկտեմբեր	աշակերտ դասղեկ
6.	Զրույց ,,Մարդն իր գործով է ճանաչվում" թեմայով	հոկտեմբեր	աշակերտ դասղեկ
7.	,,Աշակերտների իրավունքները և պարտականությունները	հոկտեմբեր	աշակերտ դասղեկ

	դպրոցում" նպատակն է հստակեցել աշակերտների մոտ իրենց իրավունքները և պարտականությունները		
8.	Անհատական պաշտպանության միջոցներ	հոկտեմբեր	աշակերտ դասղեկ
9.	Ազնիվ և անկեղծ հարաբերություններ մեր դասարանում	նոյեմբեր	աշակերտ դասղեկ
10.	,,Ընկերասիրություն և համերաշխություն" թեմայով զրույցը /գրել շարադրություն/	նոյեմբեր	աշակերտ դասղեկ
11.	Ինչպե՞ս չկորցնել հարազատ մարդկանց վստահությունն ու հարգանքը	նոյեմբեր	աշակերտ դասղեկ
12.	Հայտնի մարդկանց կյանքի պատմությունը	դեկտեմբեր	աշակերտ դասղեկ
13.	Երկրաշարժի զոհերի հիշատակի օր	դեկտեմբեր	աշակերտ դասղեկ
14.	Ամանորյա զարդարանք դասարանում	դեկտեմբեր	աշակերտ դասղեկ
15.	Առաջին կիսամյակի արդյունքների ամփոփում	դեկտեմբեր	աշակերտ դասղեկ
16.	Իմ վարքը տանը և շրջապատում	հունվար	աշակերտ դասղեկ
17.	Հարձակման ժամանակակից միջոցներ	հունվար	աշակերտ դասղեկ
18.	Հայրենի՛է, ես զարկն եմ քո բազկի: Հայոց բանակը 30 տարեկան է:	հունվար	աշակերտ դասղեկ
19.	Գիրքը իմ կյանքում	փետրվար	աշակերտ դասղեկ
20.	Ժողովրդական արտիստ Ֆրունզիկ Մկրտչյան	փետրվար	աշակերտ դասղեկ
21.	Տեառնընդառաջ տոնի խորհուրդը	փետրվար	աշակերտ դասղեկ
22.	Նշել Հովհաննես Թումանյանի ծննդյան և գիրք նվիրելու օրը	փետրվար	աշակերտ դասղեկ
23.	Ե. Չարենց: Բանաստեղծությունների ընթերցում	մարտ	աշակերտ դասղեկ
24.	Գարնանամոտ: Նշել ,,Մայրության և գեղեցկության տոնը"	մարտ	աշակերտ դասղեկ

25.	Երաժշտությունը իմ կյանքում՝ ,,Սայաթ-Նովա"	մարտ	աշակերտ դասղեկ
26.	Պաշտպանել բնությունը նշանակում է պաշտպանել հայրենիքը	մարտ	աշակերտ դասղեկ
27.	Առողջ և անվտանք ապրելակերպ	ապրիլ	աշակերտ դասղեկ
28.	Նշել մայրության և գեղեցկության տոնը	ապրիլ	աշակերտ դասղեկ
29.	Սուրբ Զատիկ	ապրիլ	աշակերտ դասղեկ
30.	Հայոց Ցեղասպանության զոհերի հիշատակի օր: Մոմավառություն	ապրիլ	աշակերտ դասղեկ
31.	Աշխատավորի միջազգային օր	մայիս	աշակերտ դասղեկ
32.	Մայիս հաղթանակների ամիս	մայիս	աշակերտ դասղեկ
33.	Ինչ տվեց ինձ այս ուսումնական տարին	մայիս	աշակերտ դասղեկ
34.	Ամփոփիչ դաս	մայիս	աշակերտ դասղեկ